ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

Արթուր Մկրտիչյան

Բանալի բառեր՝հայ սոցիոլոգիական միտք, արցախահայերի սոցիոլոգիական ժառանգություն, ազգայնություն, ազատագրական պայքար:

Արցախահայության պատմական նվաճումները մեծ նշանակություն են ունեցել հայ ժողովրդի գոյապայքարի ողջ ընթացքում: Այդ մասին շատ է գրվել և գրվում: Չկա հայ հասարակական կյանքի որևէ բնագավառ, որի լինելիության մեջ իրենց ավանդը չունենային արցախահայերը: Մեծ է այդ ավանդը նաև գիտական մտքի զարգացման գործում: Սույն հոդվածում հակիրճ ներկայացվում է արցախահայերի ներդրումը մեզանում արդի գիտության գիտակարգերից մեկի՝ սոցիոլոգիայի կայացման մեջ:

Սոցիոլոգիան,իբրև առանձին գիտություն, ձևավորվել է 19-րդ դարում: Ֆրանսիացի մտածող Օգյուստ Կոնտը, ի մի բերելով հասարակագիտական մտքի նվաճումները, ստեղծեց մի նոր գիտակարգ, որն անվանեց «սոցիոլոգիա»: Նոր գիտությունը շատ արագ տարածվեց ողջ աշխարհով՝ գրավելով բազմաթիվ հասարակագետների միտքը՝ շատերի կողմից հռչակվելով «գիտությունների պսակ»: Սոցիալական հիմնախնդիրների հետազոտությամբ զբաղվող գիտությունը ներկայանում է տարբեր հայեցակարգերի միջոցով: Բանն այն է, որ տարբեր մեծ ու փոքր ժողովուրդների պատմական զարգացումը առաջացնում է տարբեր ժամանակահատվածներում տարբեր սոցիալական հիմնախնդիրներ և օժտում դրանք կարևորության տարբեր աստիճաններով: Հետևաբար մտավորականները յուրովի են իմաստավորում այդ հիմնախնդիրները, փորձում են գիտականորեն մշակել դրանց հաղթահարման եղանակները՝ ելնելով կոնկրետ իրավիճակից և հրամայականներից:Այդպես են ձևավորվում սոցիոլոգիական ինքնատիպ հայեցակարգեր:

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ մտածողների աշխատություններում լայն տարածված էին սոցիոլոգիական մոտեցումները, կային բազմաթիվ սոցիոլոգիական մտքեր: Իսկ Երվանդ Ֆրանգյանի սուբյեկտիվիստական սոցիոլոգիայի հայեցակարգն ազդարարում է հայ սոցիոլոգիայի գիտակարգի կայացումը: Այդ մտածողների շարքում իրենց արժանի տեղն ունեն արցախահայերը:Բազմաթիվ հոդվածներում, գրքույկներում ստեղված են արժեքավոր սոցիոլոգիական մտքեր, գաղափարներ, և դրանք կարևոր ներդրում են «հայ ազգային-ազատագրական պայքարի սոցիոլոգիայի» [1]կայացման մեջ: Արցախահայերի ստեղծած սոցիոլոգիական ժառանգության ուսումնասիրությունը փաստում է հայ մտքի միասնությունը և զորությունը, հայրենասիրական բնույթն ու մարդասիրական ուղղվածությունը, ազգայինի և համամարդկայինի համադրությունը:

---

* Հոդվածն ընդունվել է 31.01.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 07.02.20:

Այդպես, օրինակ՝ Շուշիում և Թիֆլիսում 1882-1884թթ. լույս տեսնող «Գործ» թերթի խմբագիր Սիմոն Հախումյանը[1] գրում էր. «…եւրոպական լուսաւորութեանը կուրօրէն յետևելը և նրան կուրօրէն ընդունելը, չէ՛ կարող ազգին մի մեծ բարիք լինել: Համաձայն և ջերմ ջատագովն ինք այն մտքին՝ թէ մեր ժողովուրդը պէտք է օգուտ քաղէ եւրոպական մտաւոր և հոգեկան ահագին ժառանգութիւնից. բայց այդ ժառանգութիւնը ընդունելիս՝ պէտք է միշտ քննել, թէ եւրոպական կուլտուրայի մէջ ինչ բամ ճշմարիտ ընդհանուր մարդկային է, ինչ բան պտղաբեր է, ինչ բան կարևոր է մեր հայրենիքի զարգացման և բաղմնաւորութեան համար և ինչ բան նրա մէջ մասնաւոր է, անցողական՝ մինչև անգամ կեղծ և վնասակար: … Եւրոպական քաղաքակրթութիւնը մեր բարոյական անձնաւորութեան և մեր ստեղծագործական ոյժերի զարգացման միջոց պիտի դառնայ. բայց այդ կուլտուրայի իւրացնելու դժուար գործողութեան մէջ պիտի կարողանանք հաստատել և պահպանել մեր մտաւոր ազատութիւնը և հոգեկան անկախութիւնը, այնքան՝ ի հարկէ, որքան նա արգելք չէ ընդհանուր համամարդկային առաջադիմութեան»[2]:Հիրավի, Ս. Հախումյանի այս մոտեցումը շատ արդիական է նաև մեր օրերում և պետք է ուղեցույց լինի մեր պետական այրերի և դիվանագետների համար՝ զանազան միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ ստորագրելիս:

Ուշագրավ է, որ ազգայինի հիմնախնդիրը կենտրոնական տեղ էր զբաղեցնում արցախահայ մտավորականների սոցիոլոգիական հայացքներում: Դա, անշուշտ, նրանց ազգային գիտակցության բարձր մակարդակի վկայությունն է: Մեր հասարակագետներն ու հասարակական գործիչները փորձում էին օգտագործել ժամանակի գիտական մտքի նվաճումները՝ հասկանալու համար հայ ազգի առջև ծառացած խնդիրները և մշակելու դրանց համապատասխան լուծումները, հիմնավորելու հայ ազգի իրավունքներն ու անելիքները:

Ազգային մտածողությամբ օժտված հայ հասարակական գործիչներից էր նաև Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիր Համբարձում Առաքելյանը[2], ով ժամանակին եղել է Շուշիի ռեալական և թեմական դպրոցների տեսուչ և 1881 թ. Շուշիում հիմնադրել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղը: 1892-1898թթ. եղել է Թիֆլիսի ընկերության մասնաճյուղի քարտուղար, 1898թ.՝ ազգային հոգաբարձության նախագահ:Հ. Առաքելյանը իր «Ազգայնությունը և նորա պրինցիպները» աշխատության մեջ փորձում է հիմնավորել հայ ազգի իրավունքը կազմելու առանձին քաղաքական միավոր, «ապացուցանել, արդեօք հայ ազգը կարելի է նկատել իբրև ազգայնութիւն, այսինքն իբրև այնպիսի անհատների մի ամբողջութիւն, մի կենդանի հաւաքական անձնաւորութիւն, որ ըստ իւր պատմական անցեալի, ըստ իւր առանձին բնաւորութեան, ըստ իւր կուլտուրական և բարոյական ընդունակութեանց՝ իրաւունք ունենալ ինքնուրոյն, անկախ մարմին կազմելու և ինքնուրոյնապէս զարգանալու, վերջապէս իբրև մի մարմին, որ զուրկ չէ ստեղծագործական ոյժից, ուրեմն որը կարող է մարդկութեան կեանքի կողմերից մինը լրացնել, իրագործել»[3]:

---

[1] Սիմոն Գասպարի Հախումյանը ծնվել է 1859 թ. փետրվարի 14-ին Շուշիում: Ծնողները արցախյան ազնվական ընտանիքներից էին: Նրա հայտնի ազգականներից Մարիամ Հախումյանը 1864-ին Շուշիում բացել է առաջին օրիորդաց դպրոցը: Ս. Հախումյանը, ավարտելով Շուշիի թեմական դպրոցը, սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Փարիզի Սորբոնի համալսարանում, հաճախել Կոլեժ դը Ֆրանսի սոցիոլոգիայի դասընթացներին: Եղել է գրող, հրապարակախոս, թարգմանիչ, մի քանի հանդեսների (այդ թվում նաև Փարիզի «Ժամանակ»-ի) հրատարակիչ: Մամուլում հանդես է եկել Ահրիման, Մար-Ամադ, Ծերուկ, Շահիր Ձալալի և այլ ծածկանուններով: Վախճանվել է 1905թ. Փարիզում:

[2] Համբարձում Աստվածատուրի Առաքելյանը ծնվել է 1855թ. ապրիլի 29-ին Շուշի քաղաքում: 1879թ. ավարտել է Բաքվի ռեալական ուսումնարանը: 1913-1918թթ. «Մշակի» հրատարակիչ խմբագիրն էր: Ստորագրել է Շահրիհար և այլ ծածկանուններով: Սպանվել է 1918թ. հուլիսի 6-ին Թիֆլիսում:

Արցախահայության ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման մերօրյա պայքարի համատեքստում Հ. Առաքելյանի տեսական մտորումներն ու փաստարկները ստանում են նոր գործնական նշանակություն և քաղաքական իմաստ:

Ամեն մի էթնիկ փոքրամասնություն չի կարող ինքնորոշվել. «սորա համար հարկաւոր են մի քանի կարևոր պայմաններ, առանց որոնց իւրաքանչիւր ազգ կամ ժողովուրդ իրաւունք չունի աշխարհիս երեսին գոյութիւն ունենալու իբրև «ազգայնութիւն», այսինքն իբրև առանձին քաղաքակրթական մարմին …»[4]: Հիմնվելով գերմանացի հայտնի փիլիսոփա Ֆիխտեի ազգայնության հայեցակարգի սկզբունքների վրա՝ Համբարձում Առաքելյանը նշում է ազգ լինելու համար պարտադիր երեք սկզբունք՝ հող, լեզու, կրոն:Հենց սեփական հայրենիքում մեկուկես հազարամյակ քրիստոնեություն դավանող և ուրույն լեզվամշակութային ինքնատիպությամբ օժտված արցախահայությունն է, որ նվաճել է քաղաքական ինքնորոշման իրավունք: Հ.Առաքելյանը քննադատում է «Մեղու» և «Մշակ» պարբերականների հակադիր մոտեցումների միակողմանիությունը՝ ազգային կյանքի համար շատ կարևոր համարելով թե՛ Հայ Առաքելական եկեղեցու դերակատարությունը, թե՛ աշխարհիկացումը (սեկուրալիզացումը):Հայ հասարակական գործիչը գտնում էր, որ «այժմ ևս այս սօցիալականութեան դարում, այն կապը, որ կեանքի ընկերական կողմը ունի և պիտի ունենայ կրօնականին հետ չէ լուծված և բոլորովին ևս չէ կարող լուծուել, ըստ որում այդ կապը բնական է: Սակայն ժամանակակից սօցիալական շարժումը այն խորին տարբերութիւնը ունի միջնադարեան կրօնականշարժումից, որ առաջ կրօնական հայեցուածքները ամբողջապէս կլանում էին հասարակական կեանքի զարգացման բոլոր միւս կողմերը, իսկ այժմ այդ զարգացման զանազան կողմերը որոշուած են, ջոկուած, ուրոյն բաժանուած, և ի հարկէ այդ կողմերի մէջ կրօնական կողմն ևս իր արժանավայել տեղն ունի, ինչպէս ունի քաղաքականը, մտաւորը, տնտեսականը»[5]:Ինչպես տեսնում ենք, առաջարկված մոտեցումը շատ արդիական է և կարևոր մեր օրերում ևս, տեսական հիմք է արցախյան գոյամարտի ներկա իմաստավորումների համար:

Այս համատեքստում խիստ արդիական է նաև Սպանդար Սպանդարյանի[3] մոտեցումը սոցիալական այնպիսի երևույթին, ինչպիսին արտագաղթն է:«Մշակ» թերթի 1877թ. օգոստոսի 8-ի համարում լույս տեսած «Ազգայնութեան խնդիրը եւ հայ գաղթականութեան նշանակութիւնը» հոդվածում նա գրել է.«…Իլուզիա է սպասել առանց հայրենիք լեզուի միութիւն, ազգային գրականութիւն, բանաստեղծութիւն և այլն: Եթէ հայերը հայրենիք չունեն, ուրեմն և ոչինչ չունեն և մինչև անգամ այն, որ անկարող են իրանց կեանքը գազանաբարոյ, վախկոտ և ցած քրդերի դէմ պաշտպանելու, այդ ամենը պարտական են գաղթականութեան սկզբունքին: Գաղթականութիւնները հայ ազգութեան գերեզմաններն են և գաղթականները ազգութեան գերեզմանափորները»[6]: Իրոք, ինչպես բազմիցս փաստվել է, արտագաղթը եղել է և կա հայության գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Ս. Սպանդարյանի պնդումը չի կորցրել իր արդիականությունը, քանզի «գազանաբարոյ» հարևաններից եկող վտանգը ոչ միայն չի անհետացել, այլև մերօրյա իրադարձությունների համատեքստում էլ ավելի է մեծացել: Ղարաբաղյան հակամարտության պայմաններում, երբ հայ հասարակական կյանքն ախտորոշ-

---

[3] Հայ հասարակական գործիչ, հրապարակախոս, խմբագիր-հրատարակիչ Սպանդար Ամիրջանի Սպանդարյանը ծնվել է 1849 թվականին Շուշիում: Սովորել է Խալիպյան միջնակարգ դպրոցում: Այնուհետև սովորել է Գերմանիայի Լայպցիգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և դոկտորի աստիճան ստանալուց հետո վերադարձել Թիֆլիս, որտեղ 1870-ական թվականներին աշխատակցել է «Մշակ», «Մեղու Հայաստանի» պարբերականներին: 1882 թվականին հիմնել է «Նոր դար» թերթը, եղել նրա խմբագիրը: Ստորագրել է Դոկտոր Սպանդարյան և Յունիուս ծածկանուններով: Վախճանվել է 1922թ. Գերմանիայի Վիսբադեն քաղաքում:

վում է որպես «ոչ պատերազմի ոչ խաղաղության հասարակություն»[7], հայերի արտագաղթի կասեցումն օրակարգային խնդիր է: Հայտնի բոլշևիկ հեղափոխական Սուրեն Սպանդարյանի հայրը մյուս հայ հասարակագետների պես մտահոգված էր ազգության հիմնահարցով՝ սոցիոլոգիական առումով տարբերելով այն պետությունից. «Ամեն մէկ դար ունեցել է իր առաջնակարգ մտքերը, որոնք տուել են նորան իրանց յատուկ գոյնը և տնողապէս ներգործել են նորա ներքին, արտաքին, բարոյական, քաղաքական և տնտեսական կեանքի և դրութեան վրա ներկայ դարիս առաջնորդող մտքերից մէկը՝ ազգայնութեան խնդիրն է: …Մենք միայն այսչափ պէտք է ասենք, որ ազգութիւն և պետութիւն բոլորովին միմեանցից տարբեր գաղափարներ են: Մի ազգութիւն կարող է գոյութիւն ունենալ առանց մի որ և իցէ պետութեան, այն ինչ ոչ մի պետութիւն գոյութիւն չունի առանց մի ազգութեան. մի և նոյն ժամանակ մի ազգութիւն կարող է միայն պետութեան մէջ իր բարձր կատարելութեանը, նպատակներին հասնել: Ազգութիւն և պետութիւն փոխադարձ ներգործում են միմեանց վրայ»[8]:Սա հայ ազգի տեղն ու դերը աշխարհում հիմնավորելու տեսակետից կարևոր սոցիոլոգիական մոտեցում է, որն ի դեպ հակասում է Արևմուտքում ընդունված հայեցակարգերին:

Հայ ազգային ազատագրական պայքարի ժամանակաշրջանը գաղափարական առումով համընկել է աշխարհով մեկ սոցիալիստական հայացքների տարածման հետ: Բանն այն էր, որ սոցիալիզմը ներկայանում էր որպես հասարակագիտական տեսության շրջանակներում բավականաչափ հիմնավորված գաղափարակարգ: «Տեսական միտքը – նա, որ գիտէ կազնած մնալ իր կոչման բարձրութեան վրայ, ազատ մնալ դասակարգային, կրօնական և այլ տեսակ նախապաշարումներից, ականջ դնել լոկ պատմական էուոլիւցիայի ձայնին, ղեկավարուել ամենուրեք օբ'եկտիվ, առարկայական ճշմարտութեան պատուիրաններով – չի հնարում այս կամ այն հասարակագիտական վարդապետութիւնը, այլ նա միայն պաղ, անխռով արձանագրում է փաստերն ու երևոյթները, զատում է պատմութեան և ժամանակակից իրականութեան հսկայական պրոցէսի մէջ գլխաւորը երկրորդականից, էականը պատահականից և այդպէս արձանագրելով ու զատելով, նա միաժամանակ եզրակացնում է, ընդհանրացնում: … Եւ այդպէս, մի շարք գիտական հսկաների աշխատակցութեամբ ստեղծուեց նորագոյն սոցիալիզմը, իբրեւ հասարակա-փիլիսոփայական աշխարհահայեացք», - գրում էր Միքայել Վարանդյանը[9]:

Սոցիալիստական գաղափարների ազդեցությունը մեծ էր նաև արցախահայ մտավորականների շրջանում: Շատերն ընդգրկվում էին կուսակցական կառույցներում՝ փորձելով կազմակերպված բնույթ տալ իրենց պայքարին, սոցիալիզմի դրոշի ներքո համախմբել հայ ազգը: Այդպիսի գործիչներից էր Հովնան Դավթյանը[4], ով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության 1892 թվականի առաջին ընդհանուր ժողովի նախաձեռնողներից էր և Սիմոն Զավարյանի հետդասակարգային պայքարի սոցիալիստական գաղափարի հիմնական պաշտպանողներից մեկը: 1895 թ. լույս տեսած «Դրօշակ»-ի իններորդ համարում նա գրել է. «Ինչպէս անհատական կեանքում կայ «գոյութեան կռիւ», կայ և հաւաքական կեանքում. – նոյնանման շահեր ունեցող անհատները բնականօրէն համախմբուում են մրցելու, իրենց գոյութիւնը պահպանելու մի այլ խմբի՝ հաւաքական ոյժի դէմ: Այս երկու խմբի շահերը հակառակ լինելով միմիանց, նրանց մէջ մղում է հաւաքական գոյութեան կռիւ՝ բացի անհատականից, և այդ դասա-

---

[4] Հովնան Դավթյանը (Հոնան Նանոյան) ծնվել է 1865թ. Շուշիում: Ավարտել է Շուշիի թեմական, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ժնևի համալսարանում ուսումնասիրել հասարակական գիտություններ: 1895-1896 թվականներին Ժնևում խմբագրել է դաշնակցական «Դրօշակը»: 1905-1906թթ. Թիֆլիսում խմբագրել է «Հառաջ» թերթը: Վախճանվել է 1918 թ. Շվեյցարիայի ժնև քաղաքում:

կարգային կռիւն է, որ մեր օրերում՝ գործարանական, մեքենաների շրջանում՝ քաղաքակրթաւած աշխարհում հասել է իւր բարձր աստիճանին:

Ահա այս դասակարգային կռիւն է, որ քայքայում է ներկա պետութիւնների կեանքը, այս դասակարգային կռիւն է, որ այսօր քաղաքակրթաւած երկրների հասարակական ու քաղաքական կեանքին սպառնում է մի ա՛նպիսի փոթորիկ, որ տակն ու վրայ պիտի անի ամենայն ինչ՝ արմատապէս փոխելով թէ տնտեսական ու քաղաքացիական յարաբերութիւնները և թէ մարդկային հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը: …Խոշոր արդիւնաբերութեան այս բնաւորութիւնն է, որ աւելի և աւելի զարգացնում է դասակարգային կռիւը ու սրան տալիս սուր բնաւորութիւն…»[10]:Միևնույն ժամանակ Հ. Դավթյանը քաջ գիտակցում էր, որ քաղաքական «ծրագիրը այն ժամանակ է բաւարար և կենսական, նա ա՛յն ժամանակ կարող է դարմանել ժողովրդի ցաւերը, երբ այդ ծրագիրը կազմւաած է նոյն ժողովրդի հասարակական կեանքում գոյութիւնունեցող տնտեսական յարաբերութիւնների, փիլիսոփայական-հասարակական հայեացքների, հասկացողութիւնների և սովորութիւնների համեմատ…»[11]:Այս առումով հայ ազգի ազատագրման սոցիալիստական նախագիծը միանշանակ չէր ընդունվում ժամանակի հայ հասարակագետների կողմից: Մի մասը ընդունում և քարոզում էր այն, մյուսը գտնում էր, որ Հայաստանում չկան սոցիալիզմի ուղղությամբ զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ:

Ուշագրավ են Լևոն Աթաբեկյանի[5] փաստարկները. «Կովկասահայ ժողովրդի սոցիալ-տնտեսական արդի կացութիւնը, արդիւնաբերութեան հասարակական ձևերի տակաւին թոյլ զարգացումը, կուլտուրայի ցածր աստիճանը, հաղորդակցութեան միջոցների պակասութիւնը, ազգերի միջև գոյութիւն ունեցող նախապաշարումները և հակակրթութիւնները, դասակարգերի համեմատաբար թոյլ զանազանաւորումը, հայ ժողովրդի տարբեր դասերը իրար հետ շաղկապող հիմնարկութիւնների և կուսակցութիւնների ներկայութիւնը և զօրեղ ազդեցութիւնը, հայ աշխատաւորութեան բուրժուական իդէոլոգիին և ղեկավարութեան ենթարկւաած լինելը, իսկապես սոցիալիստօրէն մտածող ու գործող խմբակցութիւնների փոքրաքանակութիւնը, սոցիալիստական գաղափարի հնչակեան և դաշնակցական վարկաբեկումը և վատասերումը, այս բոլոր հանգամանքները մեզ բաւականաչափ հիմք են տալիս կարծելու, որ հայ սոցիալիստական շարժումը ներկայումս և մօտ ապագայում մեծ չափեր չպիտի ունենայ, և հայ աշխատաւորութեան ամբողջութիւնը չպիտի կարողանայ ընդգրկել իր մէջ»[12]: Նա գտնում էր, որերկու նախապայմանների՝ բանվորական մասսաների և «սոցիալիստական կամեցողութիւնների» կրող խմբի գործակցության դեպքում է միայն հնարավոր սոցիալիստական շարժումը:Շատ մեծ էր Լ.Աթաբեկյանի հեղինակությունը ոչ միայն արցախահայ մտավորականության, այլև ողջ հայության շրջանում: Թե՛ որպես հասարակական-քաղաքական գործիչ, թե՛ որպես հասարակագետ, թե՛ որպես բժիշկ, թե՛ որպես բանաստեղծ (ունի Արցախի բարբառով գրված բանաստեղծություններ): Նա պահանջում էր կառուցել քաղաքական պրակտիկան՝ հաստատուն գիտական դրույթներից ելնելով. «Ինչ հասարակական շարժում ուզում էք վերցրեք, միշտ նա պատա-

---

[5] Լևոն Նիկոլայի Աթաբեկյանը ծնվել է 1857թ. Արցախի Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում՝ հայտնի ազնվական ընտանիքում: Գերմանիայի Լայպցիգի և Թյուբինգենի համալսարաններում ուսումնասիրել է հասարակական գիտություններ, Բեռլինում և Ցյուրիխում ուսանել է բժշկագիտություն: 1903 թվականից ծավալել է հասարակական քաղաքական գործունեություն, տարբեր ծածկանուններով (Արնօլդ, Էլվենտ, Ռիխարդ, Սմբ. Սմբատեան) բազմիցս հանդես եկել ժամանակի քաղաքական մամուլում: Հարել է Հայ հեղափոխական դաշնակցությանը, 1907 թվականից մտել է էսէռների շարքերը՝ հետագա տարիներին դառնալով Բաքվի կառույցի առաջնորդ: 1917 թվականին եղել է Հայոց ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի փոխնախագահը: Զոհվել է 1918 թվականի մարտի 24-ին Բաքվում՝ հայկական ջարդերի ժամանակ՝ սպիտակ դրոշը ձեռքին հաշտարարի առաքելություն կատարելիս:

հականութեան ձեռքին պիտի մնայ, մինչև որ անհատական ձգտումները չխարսխուեն ռէալ, կօնկրէտ պայմանների հիմնաւոր հողի վրայ»[13]:Ահա թե ինչու «պրակտիկայի հետ զուգընթացաբար պիտի առաջ ընթանա տեսական վերլուծումների, վերագնահատումների ճիգերը, յեղաշրջող քայլերի թեօրիական հիմնավորումները…»[14]:

Արդեն նշվել է, որ հայ սոցիոլոգիայի գիտակարգի կայացումը կապված է Ե.Ֆրանզյանի սուբյեկտիվիստական սոցիոլոգիայի հայեցակարգի հետ: Մինչդեռ Լևոն Աթաբեկյանը հակադրվում է սուբյեկտիվիստական մոտեցմանը՝ գրելով, որ «Ճանաչողութիւնը լրիւ է միայն այն դէպքում, երբ նա զերծ է լիովին գնահատման սուբյեկտիւ տարրից, գիտակցութիւնը լրիւ է միայն այն ժամանակ, երբ նա պարփակում է իր մէջ մի նպատակադիտակից գործողութեան փաստը կամ դիտաւորութիւն: Աստղերի ընթացքը և օրգանական աշխարհի զարգացումը կարելի է ճանաչել, իսկ գիտակցելչի կարելի:

Բանւոր ժողովրդի դրութիւնը կարելի է թէ ճանաչել և թէ գիտակցել: Գիտակցութիւնը հնարաւոր է այդպիսով կեանքի այն ասպարէզներում, որոնց կարելի է ճանաչել, ուսումնասիրել, հասկանալ, գիտենալ և որոնց վրայ, միևնոյն ժամանակ, կարելի է ազդել, որոնց հետ կարելի է կապվել զգացումներով, դէպի որոնց կարելի է բարոյական պարտականութիւն զգալ:

Գիտակցութիւնը հնարաւոր է մի խոսքով անհատական և հասարակական կեանքի նկատմամբ»[15]: Սոցիոլոգիական այս հարցադրումը շատ արժեքավոր է թե՛ սոցիալական ճանաչողության, թե՛ սոցիալական պրակտիկայի առումներով, քանզի «սոցիոլոգիական խնդիրների մէջ առաջնակարգ տեղերից մեկն է բռնում պետութեան պրոբլեմը…»[16]:Լևոն Աթաբեկյանի մոտեցումն ուրվագծում է մերօրյա պետականաշինության գործում անընդհատ առաջացող խնդիրների լուծման եղանակների բանալին. առանց գիտական ճանաչողության հենքի անհնար է ամբողջությամբ գիտակցել այդ խնդիրները, և լոկ նախարարական կաբինետներում հղացած պրակտիկ քաղաքականության նախագծերը չեն կարող լինել արդյունավետ:

«Առանց ճանաչելու ազգի բաղկացուցիչ ոյժերը և նրանց հանրութեանը ծառայելու պատրաստակամութիւնը՝ մեր մէջ ձեռնարկվում են գործեր, որոնք ապարդիւն են վերջանում, քանի որ զլացվում է սպասված աջակցութիւնը», - գրել է մեկ այլ արցախցի մտածող՝ Դավիթ Անանունը[6][17]:Նրան շատ էր մտահոգում հայության հավաքական զորության հիմնախնդիրը, որն,ի դեպ, շատ ակտուալ է նաև մեր ժամանակներում:Որպես պատգամ պետք է կարդալ Դավիթ Անանունի հետևյալ տողերը. «Ազգի ֆիզիքական գոյութեան անվտանգ պահպանումը պիտի դառնար բոլորիս նուազագոյն պահանջը և նրա շուրջը պիտի ծառանայինք բոլորս՝ առանց դասակարգի, քաղաքական համոզման և աստիճանի խոշորութեան: … իսկ մենք շարունակում ենք ապրել մեր մանր անձնական կամ խմբակցական շահերով ու ձգտումներով…»[18]:Վերլուծելով 20-րդ դարի սկզբի հայության սոցիալական դրությունը և կառուցվածքային առանձնահատկությունները՝ Դ. Անանունն առաջադրում է կարևորագույն համազգային խնդիր.«Հայի ազգային թուլութիւնը բխում է նրա տնտեսական յետամնացութիւնից: … Հենց որ մեր երկիրը դարձավ խոշոր արդյունաբերութեան վայր, ամբողջովին կփոխվի և մեր նկարագիրը»[19]:Այդ խնդիրը ցայսօր մնում է ազգային օրակարգի մեջ՝ պահանջելով բոլոր հայերի հավաքական կամքի գործադրում:

---

[6] Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) (1879-1942) ծնվել է Արցախի Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղում: Նախապես հարել է ՍԴՀԿ-ին, ապա՝ Դաշնակցությանը, իսկ 1905 թվականից՝ Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությանը (սպեցիֆիկներ)՝ դառնալով վերջինիս գաղափարախոսը: Բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Սոցիոլոգիայի տեսակետից առավել ուշագրավ են նրա«Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաշարը, «Ռուսահայերի հասարակական զարգացումը» (1916-1926) աշխատությունը:

Դավիթ Անանունի կուսակից ընկեր Բախշի Իշխանյանը[7] նույնպես կարևորում էր սոցիոլոգիական ճանաչողությունը և գիտակցությունը՝ գտնելով, որ «ով գիտակցաբար չէ մօտենում հասարակութեանը, աւելի շուտ նա վնասակար է, քան օգտակար հասարակութեանը»:Նա գտնում էր, որ սոցիալական կյանքում անհատի դերի կարևորությունը պետք է ստորադասվի հասարակության նշանակությանը, իսկի՞նչ է հասարակությունը հարցը որպես այդպիսին ամբողջապես հետազոտում է հենց սոցիոլոգիան:Քանի որ «սօցիօլօգիան կոչուած է քննելու ամբողջը իւր էութեամբ, ամբողջութիւն կազմող մասերի յարաբերութիւնները, ընդհարումները, կապակցութիւնները, որոնք միացած մասեր են տալիս և ամբողջ պատկերը», ապա «մարդկային հասարակութեան վերաբերեալ գիտութիւնները շաղկապողը և մի ընդհանուր նպատակի ծառայեցնողը այսպիսով սօցիօլօգիան է», - գրել է Բախշի Իշխանյանը[20]:

1920 թ. Թիֆլիսում լույս է տեսել Բ.Իշխանյանի հեղինակած «Բագուի մեծ սարսափները, Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ.»աշխատությունը: Կիրառելով սոցիոլոգիական հարցաթերթի գործիքը՝ արցախցի հետազոտողը ողբալի իրադարձություններից անմիջապես հետո փաստագրել է Բաքվի հայերի ցեղասպանությունը: Կարելի է ենթադրել, որ եթե Բաքվի հայության լայն զանգվածները ծանոթ լինեին խորհրդային տարիներին արգելված այդ աշխատությանը, ապա որոշակիորեն կխուսափեին 1990 թվականի ջարդից: Այդ աշխատությունը լրացուցիչ մի վկայություն է այն մասին, թե ում դեմ է հիմա պայքարում արցախահայությունը, և ինչու անգամ խաղաղության պարագաներում չի կարելի վստահել հակառակորդին:

Արցախահայ գործիչների սոցիոլոգիական ավանդի մասին խոսելիս պետք է հիշատակել նաև հայտնի դաշնակցական գործիչ, հայ ազգային-ազատագրական պայքարի ակնառու ներկայացուցիչ Վանա Իշխանին[8]: Ուշագրավ է պետության էության նրա սոցիոլոգիական ըմբռնումը: «Բայց ի՞նչ է պետութեան էութիւնը: Պետութիւն լինի դա բռնապետական կամ սահմանադրական ունին միայն միակ հիմունք. կանոնաւորել հասարակութիւնների եւ անհատների միմիանց հետ ունեցած յարաբերութիւնը, որպէս զի փոխադարձ ոտնձգութիւնները վերանալով, ամէն մէկը կարողանայ միւսի պէս պահպանել իւր գոյութիւնը: Կեանքը յայտարարում է, որ ինքը յաւիտենական կռիւ է: Իսկ այդ կռւի մէջ անսիրտ կերպով մարդիկ ու հասարակութիւնները իրար ոչնչացնելով չեն կարողանում խաղաղ ապրել. հետապնդել գոնէ իրանց նւազագոյն երջանկութեան: Պետութեան զիջած իրաւունքը, կամ նոյն հասարակութեան որոշ անդամները աշխատանքի բաժանումի հիմունքով պարտաւոր եւ իրաւատէր դառնում անելու այդ կամ հաստատելու այնպիսի պայմաններ, որոնց մէջ մարդիկ եւ թոյլ եւ ուժեղ կարողանային պահպանել իրանց գոյութիւնը: Նա չարիքը պիտի չեզօքացնի եւ ստեղծի հա-

---

[7] Բախշի Իշխանյանը (1879-1921) ծնվել է Արցախի Ասկերանի շրջանի Խանցք գյուղում: Ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, 1905 թվականին՝ Լայպցիգի առևտրի ինստիտուտը: 1903 թվականին Ժնևում մասնակցել է «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայկական կազմակերպության» (սպեցիֆիկներ) հիմնադրմանը, 1906 թվականից խմբագրել է կազմակերպության «Կյանք» պաշտոնաթերթը: 1904 թվականին Ժնևում հրատարակել է Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկի իր թարգմանությունը: Ղեկավարել է Հայաստանի Հանրապետության (1918-1920) վիճակագրական բաժնի տեսչությունը, իսկ խորհրդային ռեժիմի հաստատումից հետո եղել է առաջին քաղբանտարկյալը:

[8] Վանա Իշխանը (Նիկոլ Պողոսյան) ծնվել է 1881թ. Արցախ աշխարհի Վարանդա գավառի Քռասնի գյուղում: Սովորել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցներում: Թղթակցել է «Դրոշակ», «Հայրենիք», «Հառաջ» պարբերականներին, եղել է Վանի «Աշխատանք» շաբաթաթերթի խմբագիր (1910-1911): Ղեկավարել է Վասպուրականի ֆիդայական շարժումը: 1915 թ. ապրիլին, երբ Վանի թուրք կուսակալը դիմել է ՀՅԴ ԿԿ-ին՝ հարթել հայ-թուրքական միջադեպը, Իշխանը խաղարարար առաքելությամբ ուղևորվել է Շատախ՝ բանակցությունների: Սակայն Հիրճ գյուղում գիշերը քնած ժամանակ թուրքերը դավադրաբար սպանել են Իշխանին և նրա ընկերներին:

մանման բարիք բոլորի համար: Ահա պետութեան հիմունքը: Սակայն պատմութեան ընթացքում պետութիւնը զարգացրեց իւր ֆունկցիաները, փոխեց իւր ձեւերը ու կազմակերպութիւնները դառնալ բռնի եւ քմահաճ: Մի տեղ որպէս բացարձակ բռնապետութիւն, մի այլ տեղ սահմանաւորուած, բայց միշտ յենւած սուինի եւ թնդանօթի ուժին», - գրել է Վանա Իշխանը[21]:

Դաշնակցական մեկ այլ խոշորագոյն գործիչ, գաղափարախոս, հասարակագետ Միքայել Վարանդյանը[9] մեծ հետք է թողել նաև հայ սոցիոլոգիայի պատմության մեջ: «-Հոսանքներ» (1910) աշխատությունում նա դիտարկում էր սոցիոլոգիան որպես մի գիտություն, «որ լինելով ամենաբարդը գիտութիւնների երկարաձիգ սանդուխի վրայ, թառած այդ սանդուխի գագաթին՝ հանդիսանում է միանգամայն իբրև ամենահետաքրքրականն ու հրապուրիչը մեզ համար… քանի որ նա զբաղւում է մեր ցեղի, մեր մարդկային տեսակի արիւնազանգ ճակատագրով, ազգերի և ժողովուրդների կազմակերպման ու զարգացման օրէնքներով»[22]:Մեկ այլ աշխատությունում նա ընդգծում է սոցիոլոգիայի լուսավորչական և ազատագրական նշանակությունը. «սօցիօլօգիայի,հասարակագիտութեան ծնունդի շնորհիւ, այսօր ենք միայն սկսել թօթափել հասարակական ուժերի բռնաւոր տիրապետութիւնը, մերկացնելով նրանց ընթացքն ու օրէնքները և ազդելով փոխադարձաբար նրանց վրայ»[23]: Մ.Վարանդյանը գտնում էր, որ միայն տնտեսական պատճառներն ու դասակարգային հակադրութիւնները չեն պատմության շարժիչ ուժը, որ «կայ Գաղափար-Ուժը, սուբյեկտիվ, ենթակայական ազդակը, որ չափազանց նսեմացւում է «տնտեսական մատերիալիզմի» մոլեռանդ դաւանողների կողմից, որ սակայն, նոյնպէս ունի իր պատկառելի դերը հասարակական-քաղաքական ու այլ տեսակ շարժումների, վերիվայրումների մէջ»[24]: Դարաբաղի հարցի կարգավորման համատեքստում մեր դիվանագետները որպես նախազգուշացում պետք է ընկալեն մեծ արցախցու հետևյալ տողերը. «Ազգը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, երբ նա չի օժտուած պետականութեան, քաղաքական ինքնիշխանութեան ստորոգելիներով: «Ազատ զարգացման» իրաւունքը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, քանի դեռ ազգային մարմինը կը դեգերէ անպատիւ հպատակութեան մէջ հանդէպ գերիշխող մի տարրի, քանի դեռ նա ստիպւած կը լինի իր շարժման իւրաքանչիւր քայլափոխում համակերպել օտար կամքերի, հրամանների ու հրահանգների…» [25]:

Դաշնակցական գործիչների դեմ անհաշտ գաղափարական պայքար էին մղում հայ բոլշևիկները: Սոցիալիստական գաղափարների բոլշևիկյան մեկնաբանության դիրքերից նրանք, որպես պատմության շարժիչ ուժ, առաջին պլան էին մղում արդյունաբերական ուժերի տնտեսական զարգացմամբ պայմանավորված դասակարգային պայքարի գաղափարակարգը: Բայց քանի որ հայ իրականությունը պարտադրում էր հաշվի նստել ազգային խնդիրների հետ, եղել են արցախահայ բոլշևիկներ, ովքեր հետաքրքիր մոտեցումներ են ունեցել հասարակական երևույթների նկատմամբ: Այստեղ պետք է նշել Ալեքսանդր Ծատուրյանին[10]: Նրա փաստարկներն՝ ի պաշտպանություն

---

[9] Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան) (1870-1934) ծնվել է Արցախի Շուշիի գավառի Քյաթուկ գյուղում: Ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը, 1897 թվականին՝ Ժնևի համալսարանը: Ցյուրիխի, Լոզանի, Բեռլինի, Լայպցիգի և Փարիզի համալսարաններում լսել է աշխարհահռչակ սոցիոլոգներ Վ.Պարետոյի, Վ. Զոմբարտի, Լ. Բրյուլի, Վ. Վունդտի դասախոսությունները: 1907 թվականից ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչն է եղել 2-րդ Ինտերնացիոնալում: Թողել է հարուստ տեսական ժառանգություն, հեղինակել է մի շարք մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ:

[10] Ալեքսանդր Միրզաջանի Ծատուրյանը(Ալ. Ռուբէնի) ծնվել է 1881 թվականին Շուշիում: 1903 թ. մտել է «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» շարքերը և գլխավորել նրա արմատական թևը: 1909-1913 թթ. սովորել է Մոսկվայի տնտեսագիտական ինստիտուտում, որտեղ ընկերական կապեր է հաստատել Ալ. Մյասնիկյանի, Վ. Տերյանի և այլոց

ժողովուրդների քաղաքական անջատման, կարծես մեր օրերի համար գրված լինեն: «Եթե որևէ բարբարոս ժողովուրդ նաաճում է մի կուլտուրապէս բարձր ժողովրդի և սպառնում է երկար ժամանակ խափանել նրա կուլտուրական կեանքի զարգացումը, ապա այդպիսի պայմաններում հարց չէ կարող լինել նաաճող ժողովրդի գէթ կուլտուրական ինքնուրոյն զարգացման երաշխիքների մասին, այլ միայն այդ ժողովրդի իսպառ քաղաքական անջատման: Իսկ եթէ որևէ նաաճած ժողովուրդ գտնւում է կուլտուրապէս համեմատաբար բարձր կամ միանման աստիճանների վրայ գտնւող պետութեան սահմաններում, ապա և այդ դէպքում չի կարող խոսք լինել այդ ժողովրդի կուլտուրական աւտօնօմիայի մասին…»[26]: Բոլշևիկ գործիչը «զարմանալիորեն» կիսել է ՀՅԴ հիմնադիր Ք.Միքայելյանի սոցիոլոգիական հայացքները «հարատև կռվի» վերաբերյալ: Իրականում զարմանալու բան չկա: Հայ ազգի պատմական դրությունն է ստիպել արցախահայ մտավորականին գրել հետևյալ տողերը.«Սոցիալական միջավայրը դա մարդկային հասարակութեան կեանքն է: Մարդկային հասարակութիւնը անհատների կօլեկցիա չէ, նա օրգանիզմ է, բայց ոչ Սպենսերի կարծած “օրգանիզմ”, այլ ներհակ ուժերի օրգանիզմն է այդ: Ներհակ ուժերի գոյութիւնը պայմանաւորուած է տնտեսական-քաղաքական կատեգորեաների յարատև պայքարով: Նշանակում է այդ կեանքը յարատև կռւի, յարատև գործողութեան կեանքն է…»[27]:

Հայաստանը արդյունաբերական երկիր դարձնելու Դավիթ Անանունի կողմից առաջադրված վերոնշյալ համազգային խնդրի հիմնավորումը գտնում ենք մեկ այլ արցախցի բոլշևիկ գործիչ Սարգիս Կասյանի[11] *սոցիոլոգիական աշխատություններում: Կարծես թե կանխատեսելով Հայաստանում կապիտալիզմի զարգացման ներկայիս վտանգները՝ նա գրել էր. «Ներմուծվող (իմպորտ) կապիտալիզմի սկզբնական շրջանում, վորպես ընդհանուր կանոն, ոտար կապիտալը գործում ե առեվտրական կապիտալի դեմքով: Վերջինս ենթարկում ե երկիրը անխնա շահագործության, ծծում ե նրա բնական հարստությունը, քայքայում գյուղաբնակչությունը, ավերում հին արտադրածները: Առևտրական կապիտալի համար երկիրը գաղութ ե:… ոտար կապիտալը խոշոր, յեթե չասենք գերիշխող, տեղ եր բռնում: Երկրի արտադրական ույժերի աճումը չեր համապատասխանում «ժողովրդական» հարստության աճեցմանը, վորոհետև աշխատանքի հավելյալ արժեքը՝ տոկոսների, շահի, ռենտայի միջոցով հոսում ելին երկրից դուրս»[28]: Հայ ազգային կյանքի առանձնահատկությունների բացահայտումը Սարգիս Կասյանը կապում էր այլ ազգերի հետ հարաբերակցության մեջ դրանք դիտարկելու սոցիոլոգիական սկզբունքի հետ, առաջարկում էր ազգայինհարցը քննարկել տվյալ ժամանակի հասարակական, քաղաքական շարժումների, դասակարգային կռվի համատեքստում:«Հասարակական աշխատանքի և սրա արդյունքների բաշխման ընթաց-*

հետ: 1912 թվականից անդամակցել է բոլշևիկյան կուսակցությանը: 1913 թվականին վերադարձել է Շուշի և թեմական դպրոցում դասավանդել պատմություն, ապա վարել տեսուչի պաշտոնը: 1919 թվականին նրա ջանքերով Ղարաբաղում ստեղծվել է բոլշևիկյան կոմիտե, որը պայքարում էր երկրամասի խորհրդայնացման համար: Սպանվել է 1920 թ. մարտի 20-ին ազերիների ձեռքով, երբ Շուշվա հայության ջարդի ժամանակ սպիտակ դրոշը ձեռքին հաշտարար բանախոսի առաքելություն էր փորձում կատարել: 1981-ին Ստեփանակերտում Ալեքսանդր Ծատուրյանի հիշատակին տեղադրվել է հուշարձան:

[11] Սարգիս Հովհաննեսի Կասյանը (Քոսյան) ծնվել է 1876 թ. հունվարի 28-ին Շուշի քաղաքում: Սովորել է Բաքվի ռեալական ուսումնարանում: 1900 թ. մեկնել է Գերմանիա, որտեղ ավարտել է Լայպցիգի առևտրական համալսարանը, հետո սովորել Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում: 1920 թվականի նոյեմբերին ընտրվել է Հայաստանի հեղկոմի նախագահ և ստորագրել Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու վերաբերյալ դեկլարացիան: 1924-1927 թվականներին Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի ռեկտորն էր: Թողել է հարուստ տեսական ժառանգություն: 1937թ. դեկտեմբերին դարձել է բռնադատման զոհ:

քում ձևակերպված հարաբերությունների տվեալ տեղում առաջ եկած երևույթների ամբողջական կոմպլեքսն է, վոր կազմում է մարդկային համակեցության իրականությունը: Իրականությունը բարդ է, բազմաթիվ տարրերից բաղկացած: … Յերևույթների այդ կոմպլեքսը ավելի է բարդանում այն պատճառով, վոր այժմյան ժամանակներում չկա մի տեղ, ուր մարդկային համակեցության իրականությունը առանձնացած և մեկուսացած, ինքնուրույն և անկախ լինի: Նա ենթարկված է «դրսի աշխարհի», հասարակական այլ մարմինների իրականության փոխազդեցությանը», - գրել է Ս.Կասյանը[29]: Եվ այսօր՝ գլոբալացման ժամանակաշրջանում,մենք ականատեսն ենք «դրսի աշխարհի» ազդեցիկ դերակատարությանը Ղարաբաղյան հարցի կարգավորման գործում:

Խորհրդային տարիներին հայ սոցիոլոգիական միտքը նահանջեց իր դիրքերից: Մարքսիստական վարդապետությունից բացի բոլոր մյուս սոցիոլոգիական հայեցակարգերը հայտարարված էին «բուրժուական» և արգելված: Սոցիոլոգիական մտածողության ավանդույթները խզված էին: Բայց դա չի նշանակում, որ մեր հասարակագետները դադարել են մտաքննել հայ սոցիալական իրականությունը: Խորհրդային Հայաստանում ևս եղել են մեծ մտածողներ, այդ թվում՝ արցախահայեր: Նրանք փորձում էին ճանաչել հայ ժողովրդի պատմության ընթացքի օրինաչափությունները, բացահայտել ազգային կյանքի շարժիչ ուժը՝ երբեմն հակադրվելով ԽՍՀՄ-ում իշխող գաղափարախոսական կարծրատիպերին: Մեծանուն հայ պատմագետ Լեոն[12] գրում էր. «հայ խոշոր առևտրական բուրժուազիան եր, վոր կազմում եր հասարակական առաջնակարգ շարժիչ ույժ ավատական իշխանապետությունից ազատված հայ ժողովրդի մեջ: Այդ ույժն ել դառնում է այն առանցքը, վորի շուրջ պտտում է հայոց ամբողջ պատմությունը 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերի ընթացքում»[30]: Հիշատակման է արժանի ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը[13], ով հեղինակել է «Դաշնակցության սոցիալական ծագումը» սոցիոլոգիական բնույթի աշխատությունը:Կարելի է նշել Միհրան Խաչատրյանին[14], ով զբաղվել է հասարակական հարաբերությունների և անձի վերարտադրության հիմնախնդիրներով:

Հայ հասարակագետների վերլուծական միտքը դրսևորվել է նաև հետխորհրդային անորոշության տարիներին: Օրինակ՝հետխորհրդային հասարակության փոխակերպման օրինաչափությունների վերլուծության հիման վրա հայտնի իրավագետ, Ռուսաս-

---

[12] Առաքել Գրիգորի Բաբախանյանը(Լեո) ծնվել է 1860 թվականի ապրիլի 26-ին Արցախ աշխարհի Քարին տակ գյուղում: 1878 թվականին ավարտել է Շուշիի քաղաքային վերակազմյալ դպրոցը: Լեոն աշխատակցել է «Մշակին», թողել է հասարակագիտական, պատմագիտական և գրական հարուստ ժառանգություն, բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ: 1925 թվականին Լեոյին շնորհվել է Երևանի պետական համալսարանի պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 1932 թվականի նոյեմբերի 14-ին Երևանում և թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում: Նրա պատվին փողոցներ են անվանակոչվել Երևանում և Ստեփանակերտում:

[13] Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը ծնվել է 1887 թվականի հունիսի 17-ին Շուշի քաղաքում: Սովորել է ծննդավայրի ռեալական դպրոցում: 1906 թվականին ընդունվել է Գերմանիայի Ենայի համալսարանի փիլիսոփայության բաժին: Այնուհետև ուսումը շարունակել է Հալլեի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, ավարտել է Մյունխենի համալսարանը՝ 1913 թվականին պաշտպանելով դոկտորական ավարտաճառը: Նույն թվականին վերադարձել է Շուշի և դասավանդել հոգևոր ճեմարանում: 1960 թվականին ընտրվել է ՀԽՀ ԳԱ ակադեմիկոս: Վախճանվել է 1972 թվականի հունիսի 30-ին Երևանում:

[14] Միհրան Մովսեսի Խաչատրյանը ծնվել է 1930 թ. հուլիսի 1-ին Արցախ աշխարհի Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղում: 1953 թ. ավարտել է ՀՊՄԻ պատմության ֆակուլտետը: 1990 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1953-1968 թթ. աշխատել է ԼՂԻՄ-ում՝ որպես կոմերիտմիության մարզկոմի առաջին քարտուղար, կոմկուսի մարզկոմի բաժնի վարիչ, մարզային խորհրդի պատգամավոր: 1968-ից աշխատել է ԵՊՀ-ում և ՀՊՄՀ-ում՝ որպես պրոֆեսոր:

տանի ԳԱ ակադեմիկոս Վլադիկ Ներսեսյանցը[15] գրել է իր հռչակավոր «Ցիվիլիզմի մանիֆեստը» (2000), որտեղ շարադրել է նոր սոցիոլոգիական հայեցակարգ: Խնդիրն այն է, որ «առանց քաղաքացիական սեփականության ինստիտուտի ճանաչման ու հաստատման ցանկացած անհատական սեփականություն իր բնույթով կլինի մասնավոր սեփականություն՝ դրան ներհատուկ ամբողջ հակամարտությամբ, իսկ որտեղ կա մասնավոր սեփականություն, այնտեղ անխուսափելի է նաև պայքարը դրա դեմ…»[31]: Հետևաբար վտանգվում է ներհասարակական համերաշխությունը, ինչը անթույլատրելի է անվտանգության լուրջ մարտահրավերների առջև հայտնված հայ ազգի համար: Լուծումը կարող է լինել ցիվիլիզմի հայեցակարգի շրջանակներում Վ.Ներսեսյանցի կողմից առաջադրված և իրավագիտորեն հիմնավորված քաղաքացիական սեփականության գաղափարը, քանզի «ցիվիլիզմը՝ որպես իրավունքի (ազատության, հավասարության, արդարության) զարգացման ավելի բարձր աստիճան, համաշխարհային պատմության դիալեկտիկայի նախորդ հայեցակարգերի (ներառյալ՝ հեգելյան և մարքսյան) հաղթահարումն է և դիալեկտիկայի նոր (ցիվիլիտար) հայեցակարգի արտահայտությունը, նոր բացասականի դիալեկտիկական (իրավունքի կոմունիստական բացասման) «վերացումը» և նոր դրականի (ցիվիլիտար իրավունքի) դիալեկտիկական հաստատումը»[32]:

Նորանկախ Հայաստանի փոփոխված սոցիալական դրությունը սոցիոլոգիական տեսության սկզբունքների կիրառմամբ համակարգային վերլուծության է ենթարկել մեկ այլ արցախցի հասարակագետ՝ Արամայիս Հովսեփյանը[16]:Ըստ նրա՝ «արդեն պետականություն ունեցող ազգի գաղափարախոսությունը գործառական, կոնկրետ մարդկային իմաստ կարող է ունենալ՝ միայն ու միայն այլակերպվելով որոշակի քաղաքականության, դառնալով վերջինիս ելակետը»[33]:Այսինքն, մեր գաղափարական ժառանգությունը, հասարակագիտական նախագծերն ու տեսական մշակումները պետք է դառնան պետական քաղաքականության ողն ու ծուծը: Միայն այդ դեպքում հայ հասարակության կառավարումը կլինի արդյունավետ, և պետական իշխանությունները կկարողանան համարժեք լուծումներ տալ ազգային խնդիրներին: Իսկ Ա.Հովսեփյանի գրչին պատկանող հետևյալ տողերը լավագույնս են արտահայտում սույն հոդվածի միջոցով հետապնդվող նպատակը. «Նախ անցյալի շատ իրողություններ կարող են ու պետք է նորովի արժևորվեն, և ապա անցյալը, նրա կարևորագույն պատմական իրադարձությունները, մշակութային ձեռքբերումները, ազգային սուբյեկտիվության դրական դրսևորումները պետք է միջոց դառնան արդիական հիմնախնդիրների լուծման համար: Անցյալը պետք է ներառվի ներկայի մեջ՝ գործառական ակտիվություն հաղորդելով պատմամշակութային միջավայրի այն տարրերին, որոնք ի վիճակի են արթնացնել ժողովրդի կենսական էներգիան՝ ձևավորելու ազգային լիարժեքության զգացում»:

---

[15] Վլադիկ Սմբատի Ներսեսյանցը (1938-2005) ծնվել է Ստեփանակերտում: 1961 թվականին ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 1975 թվականին ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Հեղինակել է շուրջ 400 գիտական աշխատանքներ, որոնց թվում՝ 16 մենագրություն:

[16] Արամայիս Ազիզբեկի Հովսեփյանը (1931-2006) ծնվել է Ստեփանակերտի շրջանի Ղշլաղ գյուղում (այժմ՝ Ծաղկաշատ): 1956 թվականին ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի հոգեբանության բաժինը: 1956-1961 թթ. ղեկավարել է Ստեփանակերտի քաղաքային կոմերիտական կազմակերպությունը: 1975 թվականին ստացել է դոկտորի աստիճան, 1976 թվականին՝ պրոֆեսորի կոչում: 1983-2001 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Վերմիշյան Հ., Հայ սոցիոլոգիայի պատմություն, Երևան, 2013, էջ 139:
2. «Գործ», 1884, թիվ 1, էջ 5:
3. Առաքելյան Հ., Ազգայնութիւն եւ նորա պրինցիպներ (Հայուածք հայութեան իբրեւ կուլտուրական ազգի վրայ), Թիֆլիս, 1883, էջ 20:
4. Նույն տեղում, էջ 39:
5. Նույն տեղում, էջ 36-37:
6. «Մշակ», 1877, օգոստոսի 8 (թիվ 57), էջ 2:
7. Տե՛ս Մկրտիչյան Ա., Մարդու իրավունքները որպես անդրկովկասյան «ոչ պատերազմի – ոչ խաղաղության հասարակությունների» եվրոպականացման պրոցեսների ատրակտոր, Հայաստանը մարդու իրավունքների հեռանկարում, Երևան, 2005, էջ 5 -12:
8. «Մշակ», 1877, օգոստոսի 8 (թիվ 57), էջ 1:
9. Վարանդեան Մ., Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, Ժընեւ, 1910,էջ 308, 328:
10. «Դրօշակ», 1895, հուլիսի 1 (թիվ 9), էջ 1:
11. Նույն տեղում, 1895, օգոստոսի 1 (թիվ 10), էջ 1:
12. Ռիխարդ, Սօցիալիզմը հայ իրականութեան մէջ//«Վերագնահատումներ», Բաքու,1908:
13. «Անիւ», Բաքու, 1908, մարտի 2(թիվ 1), էջ 14:
14. Էլվենտ, Պատմահայեցողություն // Վերագնահատումներ, Բաքու, 1908, էջ 12:
15. «Անիւ», 1908, հուլիսի 6 (թիվ 18),էջ 3:
16. «Շեփոր», 1908, հոկտեմբերի 12 (թիվ 9), էջ 5-6:
17. «Մշակ», 1915,թիվ 168, էջ 3:
18. Նույն տեղում, էջ 2-3:
19. Նույն տեղում, թիվ 182, էջ 3:
20. Իշխանյան Բ., Ի՞նչ է հասարակությունը, Թիֆլիս, տպ. էլեկտրաշարժ, 1909:
21. «Աշխատանք», Վան,1911, հունվարի 16 (թիվ 2),էջ13:
22. Վարանդյան Մ., Հոսանքներ, Ժնև, 1910:
23. Վարանդյան Մ., Բողոքը նորագույն պատմության մեջ, Ժնև, 1911:
24. Նույն տեղում:
25. Վարանդեան Մ., Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, Ժընեւ, 1910,էջ 5:
26. «Նոր Կեանք», Բաքու, 1912, (թիվ 3-4), էջ 122:
27. «Կոչ», Բաքու, 1911, (թիվ 4), էջ 14:
28. Կասյան Ս., Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923,էջ 8-9:
29. Նույն տեղում, էջ 6:
30. Լեո, Խոջոյական կապիտալի վոսկեդարը, էջ 289-369// Քաղաքատնտեսություն, Երևան, 2017, էջ 296:
31. Ներսեսյանց Վ., Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հասարակության, ազատության և արդարության համաշխարհային-պատմական առաջընթացում, Երևան, 2001:
32. Նույն տեղում:
33. Հովսեփյան Ա., Գաղափարախոսություն, քաղաքականություն և կառավարում// «Հայաստանը սոցիալ-փիլիսոփայական ակնարկներում», Երևան, 2003, էջ 102-116:
34. Նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Արցախցիների ավանդը հայ սոցիոլոգիական մտքի զարգացման գործում
Արթուր Մկրտիչյան

Արցախահայ վերոնշյալ մտավորականների սոցիոլոգիական ժառանգության հակիրճ ներկայացումն անգամ փաստում է, որ նրանք նշանակալի ավանդ են ունեցել հայ սոցիոլոգիական մտքի զարգացման գործում: Նրանց արտահայտած սոցիոլոգիական մտքերը, ձևակերպած սոցիոլոգիական սկզբունքները և մոտեցումները չեն կորցրել արդիականությունը նաև մեր օրերում և կարող են օգտակար լինել հայությանը՝ սպառնացող մարտահրավերների հաղթահարման տեսակետից ընդհանրապես, Ղարաբաղի հարցի լուծման առումով՝ մասնավորապես: Արցախահայերի սոցիոլոգիական ժառանգության պատառիկները, որպես այդպիսին, առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Անհրաժեշտ է, որ հայ հասարակագետների նոր սերունդը պատշաճ ուշադրություն դարձնի հայ սոցիոլոգիական մտքի ավանդույթների վերականգնման գործին և ձեռնամուխ լինի հարուստ հասարակագիտական նյութի մշակմանը:

РЕЗЮМЕ
Вклад арцахцев в развитие армянской социологической мысли
Артур Мкртичян

Ключевые слова: армянская социологическая мысль, социологическое наследие арцахских армян, национализм, освободительная борьба.

Даже краткая презентация социологического наследия представленных армянских мыслителей доказывает, что они внесли значимый вклад в развитие армянской социологической мысли. Их идеи, сформулированные социологические принципы и подходы не утратили актуальности в наши дни и могут быть полезны армянам в плане преодоления вызовов в целом, и в решении карабахской проблемы в частности. Фрагменты социологического наследия армян Арцаха как таковые сейчас впервые вводятся в научное обращение. Новым поколениям армянских обществоведов необходимо уделять должное внимание восстановлению традиций армянской социологической мысли и разработке богатого научного материала.

SUMMARY
The Contribution of The Artsakh Intellectuals to the Development of Armenian Sociology
Artur Mkrtichyan

Keywords: Armenian sociological thought, sociological heritage of Artsakh Armenians, nationalism, liberation struggle.

Even a brief presentation of the sociological heritage of the above-mentioned Armenian intellectuals proves that they have made a significant contribution to the development of Armenian sociological thought. Their sociological ideas, formulated sociological principles and approaches have not lost relevance in our day and can be useful for overcoming the challenges that threaten the Armenians in general, and for the resolution of the Karabakh conflict in particular. For the first time, the sociological legacies of the Artsakh Armenians are put into scientific circulation. It is necessary for the new generations of Armenian sociologists to pay due attention to the restoration of the traditions of Armenian sociological thought and to the processing of rich sociological material.